ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1479 27.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան.

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Տավուշի ՁՊՎ արձանագրել է մի շարք թերություններ և խախտումներ:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԻՍ
ՄՏԻՆ № 4302
28 10 2014

Թերություններ՝

1. Բուժսենյակում մահճակալը ամրացված չէր հատակին:
2. Սանհանգույցը գտնվում էր կեղտոտ վիճակում և օդափոխության կարիք էր զգացվում :
3. ՁՊՎ-ի բոլոր սենյակները գտնվում էին փոշոտ վիճակում:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՐԿԱՆ ՄՈՒՏՔԻ ԿԱՐԳՈՒՄ
ՄՏԻՆ № 8328
«28» 10 2014թ.

Խախտում՝

Նարեկ Վարդանի Մադյանը և Դավիթ Հրանտի Հովհաննիսյանը ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ՁՊՎ են ընդունվել 12.08.2014թ-ին ժամը 20:00-ին և 13.08.2014թ-ին ժամը 15:00-ին տեղափոխվել են ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Իջևանի ՁՊՎ: Նշված անձիք առանց բավարար հիմքերի են ընդունվել ՁՊՎ, քանի որ Դիտորդական խմբին որպես ՁՊՎ ընդունելու հիմք ներկայացրեցին Տավուշի մարզի դատախազ Տ. Սարգսյանի կողմից ներկայացված գրությունը, որտեղ նշվում է, որ <<12.08.2014թ-ին ժամը 16:00-ին ՀՀ ԱՆ <<Աբովյան>> ՔԿՀ-ից տեղափոխել ՀՀ ոստիկանության Տավուշի բաժնի ՁՊՎ, նրանց կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը քննարկելու նպատակով>>, որը չի կարող հիմք հանդիսանալ տվյալ անձանց ՁՊՎ ընդունելու: Ավելացնենք, որ նույն դատախազի կողմից, նույն

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ձևի գրություն տրվել էր նաև Իջևանի բաժնին: Միաժամանակ նշենք, որ Ն. Մաղյանը և Դ. Հովհաննիսյանը առանց հիմքի և անհասկանալի պատճառներով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Տավուշի ՃՊՎ-ից տեղափոխվել են ոչ թե ՀՀ ԱՆ <<Աբովյան>> ՔԿՀ, այլ ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Իջևանի ՃՊՎ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1,2,3,4,5/*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-3084 «26» 11 2014թ.

Ձեր 27.10.2014թ. թիվ 2621/1479 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Տավուշի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված թերությունները վերացվել են:

4. Ն.Մադյանի և Դ.Հովհաննիսյանի կալանավորման ժամկետը երկարացնելու հարցը Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Տավուշի նստավայրում 12.08.2014թ. ժամը 16.00-ին քննության առնելու համար Տավուշի մարզի դատախազի կողմից գրություն է տրվել ոստիկանության Տավուշի մարզային վարչության և Տավուշի բաժնի պետերին: Նշված գրության հիման վրա ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնի Տավուշի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Ա.Մայիլյանի կողմից 11.08.2014թ. որոշում է կայացվել Ն.Մադյանին և Դ.Հովհաննիսյանին 12.08.2014թ. <<Աբովյան>> ՔԿՀ-ից տեղափոխել ոստիկանության Տավուշի բաժնի կամ Իջևանի բաժնի ՁՊՎ՝ դատական նիստին վերջիններիս մասնակցությունը ապահովելու համար: Հաշվի առնելով, որ Իջևան-Բերդ ավտոմայրուղին մշտապես գտնվում է Ադրբեջանի զինված խմբավորումների կողմից արձակած կրակահերթերի տակ և վերջիններիս անվտանգ տեղափոխումն ապահովելու նպատակով՝ Տավուշի մարզի դատախազի կողմից տրված գրությունում և քննիչ Ա.Մայիլյանի որոշման մեջ նշվել են ոստիկանության Իջևանի ու Տավուշի բաժինների ՁՊՎ-ները: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ Ն.Մադյանը և Դ.Հովհաննիսյանը դատական նիստի ավարտից հետո իրենց անձնական գործերով ոստիկանության Տավուշի բաժնի ՁՊՎ-ից տեղափոխվել են Իջևանի բաժնի ՁՊՎ, որպեսզի հնարավոր լինի առանց բարդությունների վերջիններիս տեղափոխել ՀՀ ԱՆ <<Աբովյան>> ՔԿՀ: Քննիչ Ա.Մայիլյանի կողմից կայացված որոշումը անձնական գործերի հետ փոխանցվել է ոստիկանության Իջևանի բաժին, այդ իսկ պատճառով նշված որոշումը հնարավոր չի եղել տրամադրել դիտորդների խմբին:

ՀՀ ոստիկանության շտաբ